

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋԵԱՆԻՆ ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆ

Ողորմութեամբն բարեաց պարգևատու մեր Աստուծուն, Մեր գահակալութեան առաջին իսկ օրերից Մեզ շրջապատեցին այստեղ մեր հայրենի անուանի ճարտարապետներ ու արուեստագէտներ և անսակարկ բարեխղճութեամբ օգնեցին Մեզ սիրով, իրենց գիտութեամբ, իրենց տաղանդով ու իրենց բարձր ճաշակով, ի խնդիր վերաշինութեան ու բարեպարդման Մայր Աթոռիս և մեր երկրի պատմական սրբավայրերի:

Մեր Եկեղեցին ու մեր ժողովուրդը միշտ երախտագիտութեամբ պիտի յիշեն նրանց անունները ու մեծ վաստակը:

Դուք, յարգելի Տիար, այդ երախտաւորների շարքում, մասնաւոր Ձեր տեղն էք գրաւել Ձեր մատուցած բազում ծառայութիւններով վերջին քսան տարիների ընթացքում, իբրև հեղինակաւոր անդամ Սուրբ Էջմիածնի ճարտարապետական Յանձնաժողովի և իբրև խորհրդատու ու ղեկավար Մայր Աթոռիս նկարչական և գեղարուեստական աշխատանքների:

Ձեր իրագործումների մէջ, արուեստի կոթողային գործեր ենք հասարում Մենք՝ Նոր Վեհարանը զարդարող գոբելեն տեսակի մեծածաւալ երեք գործերը, նուիրուած Սուրբ Գրիգոր Լուսաւորչի տեսիլքին, Հայոց տառերի գիւտին և Վարդանանց հերոսամարտին, երեքն էլ արգասիքը նկարչական Ձեր լուսաշող տաղանդի և հոգևոր ազգային ներշնչանքների:

Մեր համոզումով, այս երեք ստեղծագործութիւնները դափնեպսակն են հանդիսանում Ձեր գեղարուեստական այնքան հարուստ վաստակի, որ բազմիցս արժանացել է պետական ամենաբարձր մեծարանքների:

Արդ, սոյն Մեր կոնդակով ուրախ և երախտագէտ սրտով բերում ենք Ձեզ Մեր հայրապետական գնահատանքը և օրհնութիւնը, Մայր Աթոռիս Ձեր ըն-

ծայաբերած այս երեք ստեղծագործությունների համար, և պարգևատրում ենք Ձեզ «ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ» առաջին կարգի շքանշանով, ողջոյնով, որ այն կրէք Ձեր ակնիւ սրտի վրայ արդար հպարտանքով, քաջառողջությամբ ու ընտանեկան երջանկությամբ:

Այսօր Ձեր վաստակը հասել է իր գագաթնակէտին, սակայն ոչ իր լրումին: Մենք մաղթում ենք Ձեզ ևս մի քանի տասնեակ կենաց արևոտ տարիներ, լի ստեղծարար ներշնչանքներով ու նորանոր փայլուն իրագործումներով:

Ու այս պահին հաճելի է Մեր օրհնությունը և ամենաբարի մաղթանքները ներկայացնել նաև Ձեր կեանքի ընկերոջը, ակնուաջուք Տիկին Ջեմմային, որ իրապէս Ձեր կեանքի հոգատար սյահապան հրեշտակն է, այնքան սիրով ու այնքան նուիրումով:

«Ողջ լերուք կօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 17 Դեկտեմբերի
1983 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԲ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1231